
Lnj

Աստված մարդուն ստեղծեց Իր նմանությամբ:

Մարդը ստեղծվեց տղամարդ և կին:

Աստված օրհնեց նրանց և անվանեց «մարդ»:

130 տարի ապրելուց հետո, մարդն իր նմանությամբ և՛ս մեկ որդի ունեցավ, և նրան կոչեց Սեթ:

Ադամն ուրիշ որդիներ և դուստրեր էլ ունեցավ:

Սեթը Ենովսի հայրն էր:

Ենովսը Կայնանի հայրն էր:

Կայնանը Մաղաղիէլի հայրն էր:

Մաղաղիէլը Հարեդի հայրն էր:

Հարեդը Ենովքի հայրն էր:

Ենովքը Մաթուսաղայի հայրն էր:

Ենովքը հաճելի էր Աստծուն և Նրա հետ էր քայլում, այդ պատճառով էլ Տերը վերցրեց նրան Իր մոտ:

Մաթուսաղան Ղամեքի հայրն էր:

Ղամեքը որդի ունեցավ և կոչեց Նոյ[1]:

Ղամեքն ասաց. «Նա մեզ պիտի հանգստացնի մեր գործերից ու մեր ձեռքերի աշխատությունից, որ Տիրոջ անիծած երկրի պատճառով կկրենք»:

Նոյը Սեմի, Քամի և Հաբեթի հայրն էր:

1 - «Նոյ» նշանակում է հանգստություն



Ծննդոց 5.1-32


Մարդկությունը սկսեց շատանալ երկրի երեսին: Աստված որոշեց կրճատել նրանց կյանքի տարիները մինչև 120 տարին:
Աստված տեսավ, որ մարդը դարձել է շատ չար և, որ նրա հակումը միայն դեպի չարիքն է:
Աստված ասաց. «Երկրի վրայից պիտի ջնջեմ ինչ որ ստեղծեցի՝ մարդ ու անասուն, սողուններ և երկնքի թռչուններ, որովհետև զղջացի, որ նրանց ստեղծել եմ»:
Բայց Նոյը շնորհք գտավ Աստծո առջև:
Ահա Նոյի պատմությունը...
Նոյն արդար ու ազնիվ մարդ էր, որ հետևում էր Աստծուն իր ողջ սրտով:
Նոյն ու նրա կինն ունեին երեք որդի՝ Սեմը, Քամն ու Հաբեթը:
Եվ Աստված խոսեց Նոյի հետ…
Բոլոր մարդկանց վերջը հասել է, քանի որ երկիրը նրանց միջոցով անիրավությամբ լցվեց, ուստի նրանց երկրի երեսից պիտի ավիրեմ:
Դու քեզ համար նոճու փայտից մի տապան շինիր, տապանի մեջ խորշեր շինիր, այն ներսից ու դրսից ձյութով պատիր: Տապանի երկարությունը թող լինի 300 կանգուն, լայնությունը 50 կանգուն և բարձրությունը 30 կանգուն:
Տապանին լուսամուտ շինիր և այն մեկ կանգունի չափով թող լինի վերևից ու դուռն էլ մի կողմից դիր.այն շինիր ներքնատնով, միջնատնով ու վերնատնով:
Ահա՛, Ես երկրի վրա ջրհեղեղ պիտի բերեմ, երկնքի տակ կենդանության շունչ ունեցող ամեն էակ պիտի կործանվի: Երկրի վրա ինչ որ կա՝ պիտի՛ սատկի:
Բայց Ես Իմ ուխտը պիտի քեզ հետ հաստատեմ ու տապանը պիտի մտնեք դու և կինդ, որդիներդ և նրանց կանայք:
Ծննդոց 6.1-22


Աստված սկսեց իրահանգել Նոյին…
Ամեն տեսակ անասուններից՝ արու և էգ, յուրաքանչյուրից երկ-երկու հատ բեր տապան, որ քեզ հետ ողջ մնան: Դեպի քեզ պիտի գան թռչունների, ընտանի կենդանիների ու սողունների ամեն տեսակից երկ-երկու հատ:
Տապանի մեջ հավաքիր այն ամեն սնունդը, որ նրանք և դուք կարիք կունենաք ուտելու:
Նոյը կատարեց Աստծո բոլոր պատվիրածի համաձայն, որից հետո Տերը պատվիրեց նրանց մտնել տապանը:
Յոթ օր անց…
Ծննդոց 6.19 - 7.10


Այդ օրը մեծ անդունդի բոլոր աղբյուրները ճեղքվեցին ու երկնքի պատուհանները բացվեցին: Ու երկրի վրա քառասուն օր ու քառասուն գիշեր անձրև տեղաց:
Ու երկրի վրա շարժվող ամեն մարմին, թե՛ թռչուն, թե՛ անասուն, թե՛ գազան, թե՛ երկրի վրա սողացող ամեն սողուն և թե՛ մարդ, բոլորը մեռան:
Քառասուն օր տևած ջրհեղեղի պատճառով, երկրի վրա ջուրը շատացավ, շարժեց տապանն ու երկրից բարձրացրեց այն: Քանի որ ջուրն ավելի ու ավելի էր բարձրանում, տապանը սկսեց լողալ երկրի երեսին. ի վերջո երկնքի տակ եղող բարձր լեռները նույնպես ծածկվեցին ջրով: Ջուրը տասնհինգ կանգուն վեր բարձրացավ լեռների գագաթներից:
Ու երկրի երեսին եղող ամեն էակ կործանվեց: Մնաց միայն Նոյն ու իր հետ տապանում եղողները: Երկիրը ջրով ծածկված մնաց հարյուր հիսուն օր:
KOOM
Եվ Աստված հիշեց Նոյին ու նրա հետ տապանի մեջ եղած բոլորին, և Նա երկրի վրա քամի բերեց ու ջրերը սկսեցին նվազել:
Ծննդոց 7.11-24


ՏԱՊԱՆՆ ԱՐԴԵՆ ԱՎԵԼԻ ՔԱՆ ՀԱՐՅՈՒՐ ՕՐ ԿԱՆԳՆԱԾ ԷՐ ՀՈՂԻՆ, ԵՐԲ ՆՈՅԸ ՄԻ ԱԳՌԱՎ ԱՐՁԱԿԵՑ:
ԻՆՉՈ՞Ւ ԴԱ ԱՐԵՑԻՐ, ՀԱՅՐԻ՛Կ:
ՎԵՐԵՎԻՑ ԱԳՌԱՎԸ ԿԿԱՐՈՂԱՆԱ ՏԵՍՆԵԼ ՈՒ ԳՏՆԵԼ ՉՈՐ ՀՈՂ: ԵԹԵ ՎԵՐԱԴԱՌՆԱ, ԱՊԱ ՄԵՆՔ ԿԻՄԱՆԱՆՔ, ՈՐ ՋՐԵՐԸ ՉԵՆ ՔԱՇՎԵԼ:
Ո՛Չ, ՀԱՅՐԻ՛Կ, ԵՍ Ի ՆԿԱՏԻ ՈՒՆԵԻ՝ ԻՆՉՈ՞Ւ ԱԳՌԱՎՆԵՐԻՑ ՄԵԿԻՆ ԱՐՁԱԿԵՑԻՐ: ՄԵՆՔ ՄԻԱՅՆ ԵՐԿՈՒ ԱԳՌԱՎ ՈՒՆԵԻՆՔ, ԵՎ ԵԹԵ ԱՅԴ ՄԵԿԻ ՀԵՏ ՄԻ ԲԱՆ ՊԱՏԱՀԻ...
ՀԱՋՈՐԴ ԱՆԳԱՄ ԱՂԱՎՆԻ ԿԱՐՁԱԿԵՄ, ՔԱՆԻ ՈՐ ՅՈԹ ՀԱՏ ՈՒՆԵՆՔ...
ԲԱՅՑ ԱԳՌԱՎԸ ՋՐԵՐԻ ՎՐԱ ԱՅՍ ՈՒ ԱՅՆ ԿՈՂՄ ԷՐ ԹՌՉՈՒՄ:
ՄԵԿ ՇԱԲԱԹ ԱՆՑ...
ԻՆՉՈ՞Ւ ԵՍ ԱՆՀԱՆԳԻՍՏ, ՀԱՅՐԻ՛Կ:
ԱՆՑՅԱԼ ՇԱԲԱԹ ԴՈՒ ԱԳՌԱՎԻՆ ԱՐՁԱԿԵՑԻՐ, ԲԱՅՑ ՆԱ ՀԵՏ ԵԿԱՎ:
ԱՅՈ՛, ՊԱՐԶԱՊԵՍ ԻՆՁ ՀԵՏԱՔՐՔԻՐ Է: ԵՍ ՈՒԶՈՒՄ ԵՄ ԻՄԱՆԱԼ՝ ԻՆՉ ՎԻՃԱԿ Է ԴՐՍՈՒՄ, ՍԱԿԱՅՆ ՉԵՄ ՀԱՄԱՐՁԱԿՎՈՒՄ ԴՈՒՌԸ ԲԱՑԵԼ:
ԾՆՆԴՈՑ 8.6-9


ԵՎՍ ՄԵԿ ՇԱԲԱԹ...
ՀԱՅՐԻ՛Կ, ԿԱՐԾՈՒՄ ԵՍ ՀԻՄԱ ԺԱՄԱՆԱ՞ԿՆ Է:
ՄՈՏ ՕՐԵՐՍ ԿԼԻՆԻ: ԵՍ ԳԻՏԵՄ ԴԱ:
ՆԱՅԻ՛Ր ԱՅՆ ԿՈՂՄ, ՎԵՐԱԴԱՌ-ՆՈՒ՛Մ Է:
ԱՅՈ՛, ՀԱՅՐԻ՛Կ, ՎԵՐԱԴԱՌՆՈՒ՛Մ Է: ԲԱՅՑ ՏԵ՛Ս: ՆԱ ԻՆՉ-ՈՐ ԲԱՆ Է ԲԵՐՈՒՄ ԿՏՈՒՑՈՎ:
ՁԻԹԵՆՈՒ ՏԵՐԵ՛Վ
ՁԻԹԵՆՈՒ ՏԵՐԵ՛Վ
ՆՈՅԸ ՍՊԱՍԵՑ ԵՎՍ ՄԵԿ ՇԱԲԱԹ, ԻՍԿ ՀԵՏՈ...
ԻՆՁ ԹՎՈՒՄ Է, ՈՐ ԱՅՍՕՐ ԱՂԱՎՆԻՆ ԷԼ ՉԻ ՎԵՐԱԴԱՌՆԱ:
ԱՅՍ ԹՌՉՈՒՆԸ ԳՏԱՎ ՀԱՆԳՉԵԼՈՒ ՏԵՂ: ԵՍ ԳԻՏԵ՛Ի ԴԱ:
ՄԵՆՔ ԴԵՌ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՆՔ ՍՊԱՍԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ ՈՐ ՀՈՂԸ ԲԱՎԱԿԱՆԱՉԱՓ ՉՈՐ ԼԻՆԻ ՄԵՐ ՈՒ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ԲԱՅՑ...
...ԲԱՅՑ ՀԻՄԱ ԿԱՐԵՎՈՐ ՉԷ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿՍՊԱՍԵՆՔ: ՀԱՅՐԻ՛Կ, ԴԱ ՉԻ ՏԵՎԻ ԱՅՆՔԱՆ, ՈՐՔԱՆ ՀԱՐԿ ԵՂԱՎ ՍՊԱՍԵԼ ՄԻՆՉԵՎ ՏԱՊԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԸ:




ԾՆՆԴՈՑ 8.14, 15




ԾՆՆԴՈՑ 8.17-19


ՈՐԴԻՆԵ՛ՐՍ
ԲԵՐԵ՛Ք ՄԵԿԱԿԱՆ ՄԱՔՈՒՐ ԿԵՆԴԱՆԻ։
ԻՆՉՈ՞Ւ, ՀԱՅՐԻ՛Կ։
ԴՐԱՆՔ ՊԵՏՔ Է ԶՈՀԱԲԵՐԵՆՔ ՄԵՐ ԱՍՏԾՈՒՆ ՈՐՊԵՍ ՈՂՋԱԿԵՍ։
ՀԻՄԱ՝ ԿՐԱԿ։
ՀԱՅՐԻ՛Կ, ԱՀԱ ԱՂԱՎՆԻՆ։

ԾՆՆԴՈՑ 8.20


ԱՃԵՑԵ՛Ք ՈՒ ՇԱՏԱՑԵ՛Ք ՈՒ ԵՐԿԻՐԸ ԼՑՐԵ՛Ք:
ԵՎ ՁԵՐ ՎԱԽՆ ՈՒ ԵՐԿՅՈՒՂԸ ԵՐԿՐԻ ԲՈԼՈՐ ԳԱԶԱՆՆԵՐԻ ՎՐԱ ՈՒ ԵՐԿՆՔԻ ԲՈԼՈՐ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ ԹՈՂ ԼԻՆԻ: ԵՐԿՐԻ ԲՈԼՈՐ ՇԱՐԺՎՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՈՒ ԾՈՎԵՐԻ ԲՈԼՈՐ ՁԿՆԵՐԻ ՀԵՏ...
...ԴՐԱՆՔ ՁԵՐ ՁԵՌՔՆ ԵՆ ՏՐՎԱԾ:
ԱՄԵՆ ՇԱՐԺՈՒՆ ԿԵՆԴԱՆԻ ԹՈՂ ՁԵԶ ԿԵՐԱԿՈՒՐ ԼԻՆԻ:
ԱՄԵՆԸ ՁԵԶ ԲԱՆՋԱՐԻ ՊԵՍ ՏՎԻ:
ԵՎ, ԱՆՇՈՒՇՏ, ՁԵՐ ԿՅԱՆՔԻ ԱՐՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՇԻՎ ՊԻՏԻ ՊԱՀԱՆՋԵՄ:
ԱՄԵՆ ԳԱԶԱՆԻ ՁԵՌՔԻՑ ՊԻՏԻ ՊԱՀԱՆՋԵՄ:
ԵՎ ԱՄԵՆ ՄԱՐԴՈՒ ՁԵՌՔԻՑ ՊԻՏԻ ՊԱՀԱՆՋԵՄ ԱՅՆ: ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԸ ԵՂԲՈՐ ՁԵՌՔԻՑ ՊԻՏԻ ՊԱՀԱՆՋԵՄ:
ՈՎ ՈՐ ՄԱՐԴՈՒ ԱՐՅՈՒՆ ԹԱՓԻ, ԻՐ ԱՐՅՈՒՆՆ ԷԼ ՄԱՐԴՈՒՑ ՊԻՏԻ ԹԱՓՎԻ, ՔԱՆԻ ՈՐ ԱՍՏՎԱԾ ԻՐ ՊԱՏԿԵՐԻ ՊԵՍ ՍՏԵՂԾԵՑ ՄԱՐԴՈՒՆ:
ԻՍԿ ԴՈՒՔ ԱՃԵՑԵ՛Ք ՈՒ ՇԱՏԱՑԵ՛Ք, ԵՐԿՐԻ ՎՐԱ ԲԱԶՄԱՑԵ՛Ք ՈՒ ԼՑՐԵ՛Ք ԱՅՆ:

ԾՆՆԴՈՑ 9.1-7



ԾՆՆԴՈՑ 9.11-17




ԾՆՆԴՈՑ 9.20-21


ՀԱՅՐԻ՞Կ...
ՄԱՅՐԻԿՆ ՈՒԶՈՒՄ ԷՐ ԻՄԱՆԱԼ...
Օ՜Հ, ՀԱՅՐԻ՜Կ:
ԵՍ ՀՈՒՅՍ ՈՒՆԵԻ, ՈՐ ԱՅԴ ԹՌՉՈՒՆՆԵՐԸ ԿՄՆԱՅԻՆ ԱՅՍՏԵՂ:
ԴՐԱՆՔ ԲԱՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԵՂ ՄԻՍ ՈՒՆԵԻՆ, ՍԱԿԱՅՆ, ԱՓՍՈ՜Ս, ՀԵՌԱՑԱՆ ՄՅՈՒՍ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀԵՏ:
ՔԱ՛Մ, Ի՞ՆՉ Է ՊԱՏԱՀԵԼ:
ՀԱՅՐԻԿԻՆ ՀԱՐՑՐԵՔ, ԹԵ ԻՆՉ Է ՊԱՏԱՀԵԼ:
ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆ ԻՐ ՊՏՈՒՂՆԵՐՆ Է ՏՎԵԼ ՈՒ, ԿԱՐԾԵՍ, ՄԵՐ ՀԱՅՐԸ ԼԱՎ ԳԻՆՈՎՑԵԼ Է:
ՀԻՄԱ ՆԱ ՊԱՌԿԱԾ Է ԻՐ ՎՐԱՆՈՒՄ ԲՈԼՈՐՈՎԻՆ ՄԵՐԿ, ԻՆՉՊԵՍ ԻՐ ԾՆՎԱԾ ՕՐԸ:
ԳՆԱՑԵ՛Ք ԵՎ ԻՆՔՆԵ՛ՐԴ ՏԵՍԵՔ:

ԾՆՆԴՈՑ 9.22




ԾՆՆԴՈՑ 9.23-27



ԾՆՆԴՈՑ 9.19, 28